ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՏԻԿԻՆ Գ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Եղիազարյան.

Ի պատասխան Ձեր 14.08.2020թ. գրության՝ տեղեկացվում է, որ դեռևս 2019թ.-ին Արզումանյան փողոցի 4-րդ կարգի վթարային հ.10 շենքի քանդման և նորի կառուցման նպատակով եղել էր առաջարկ՝ ներդրող կազմակերպության կողմից:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության աշխատակիցների, ներդրողի և Արզումանյան փողոցի հ.10 շենքի բնակիչների հետ համատեղ կայացել են մի շարք քննարկումներ, որոնց արդյունքում 1-ին մուտքի բնակիչները համաձայն են եղել շենքի քանդմանը, իսկ 2-րդ և 3-րդ մուտքի բնակիչները՝ դեմ:

2019թ.-ի ընթացքում շենքի բնակիչները 2 անգամ հրավիրվել են Երևանի քաղաքապետարան խորհրդակցության, սակայն չեն ներկայացել: 22.07.2019թ.-ին Երևանի քաղաքապետարանում հրավիրվել է ևս մեկ խորհրդակցություն՝ շենքի բնակիչների, նշված տարածքից ընտրված ՀՀ ԱԺ պատգամավոր Վահագն Հովակիմյանի, ՀՀ ԱԺ նախագահի օգնական Շուշանիկ Թևանյանի, Երևանի քաղաքապետի նախկին տեղակալ Հայկ Սարգսյանի և քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետ Գրիգոր Հարությունյանի մասնակցությամբ: Խորհրդակցության ժամանակ բնակիչները դարձյալ անհամաձայնություն են հայտնել ներկայացրած առաջարկների վերաբերյալ, որից ելնելով՝ ներդրողը հրաժարվել է իրականացնել ներդրումային ծրագիրը: Այս ժամանակահատվածում այլ ներդրողներից որևէ առաջարկ չի ստացվել:

Միաժամանակ Երևանի քաղաքապետարանը պատրաստակամություն է հայտնել Արզումանյան փողոցի հ.10 շենքի առաջին մուտքի և երկրորդ մուտքի երկու բնակարանների բնակիչների կողմից բնակարան վարձակալելու վարձավճարները վճարելու համար:

Տեղեկացվում է նաև, որ Երևանի քաղաքապետարանի տրամադրության տակ 4-րդ կարգի վթարային շենքերի բնակիչներին վերաբնակեցնելու համար անհրաժեշտ քանակությամբ բնակարաններ առկա չեն և առաջարկվել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեին՝ որպես քաղաքաշինության ոլորտում պետական լիազոր մարմին, միջոցներ ձեռնարկել պետական բյուջեի վերաբերյալ քննարկումների ժամանակ Երևան քաղաքի 4-րդ կարգի վթարային շենքերի բնակիչների վերաբնակեցման նպատակով բնակարանային ֆոնդի ստեղծմանն ուղղված միջոցներ նախատեսելու համար:

Ինչ վերաբերում է Աջափնյակ վարչական շրջանի Նազարբեկյան փողոցի հ.48 շենքի տանիքի ծածկի կառուցմանը, ապա տեղեկացվում է, որ նախատեսվում է կազմակերպել շինարարական աշխատանքների գործընթացը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ